



Ա Պ Ա Բ Ա Ը

Թիկ Ա. — ԵՐԱՐԱԾ ԺԷ. 1885 ՏԱՐԻ ԺԷ. ՅՈՒՆՎԱՐ 31.

ԱՐԱՐԱՏԻ ԺԷՐ ՃՐՁԱԿՆ

ԱՏՈՒԳԱՆՑ է
1952 թ.

Այս ամսատետրակովս Արարատը ոկտումբե նոր շրջան և նոր տարի: Ամենայն նոր բան՝ նոր մտածողութիւն է առաջ բերում: այդ մտածողութիւնը օժտուած հնի փորձառութեամբ՝ նոր երաշխաւորութիւն է տալիս գործի յաջողութեան:

17 տարի է զոյութիւն ունի Արարատը, և այդ 17 տարին անցկացրեց նո ըստ իւրաքանչ կարեաց աշխատելով բարի ծառայութիւն մատուցանել ազգին և եկեղեցուն: Չենք կարող պրնդել թէ Արարատը ըստ ամենայնի կատարեալ է եղել իւր տեսակում: Նոյնը և չենք կարող հաւաստիացնել ապագայի մերարերութեամբ: բայց կարող ենք ասել թէ անցեալի փորձառութիւնն ունենալով՝ յուսալի է որ Արարատը իւր, արդէն յայտնի ուղղութեամբ, կը խոստանայ աւելի յաջող ապագայ: որովէս զի Արարատը իրեւ Մայր Աթոռի կենդրօնական վարչութեան մի հրատարակութիւն ծառայէ իւր նպաստակին՝ հարկաւոր էր ոչ միայն Աեհափառ Կաթողիկոսի և Սինօդի, այլ և բոլոր վիճակաւորների և Հոգեւոր ատեանների վարչական ոյնովիսի անօրէնութիւնները որոնք ընդհանուր նշանակութիւն ունին, իւր մէջ ընդունելով հոգերի գիտութիւն բոլոր հոգեւոր պաշտօնէից և հոգեւորականաց: այս մասը պակասաւոր է Արարատի մէջ: Խոնարհարար հրաւիրու-

մենք Սրբազն վիճակաւորների և Հոգեոր ատեանների ուշադրութիւնը այս կետի վերայ:

Արարատի Խմբագրութիւնը ցանկանալով իւր ընթերցողներին ծանօթացնել և տեղեակ կացուցանել Կ. Պօլսոյ Պատրիարքարանի հաստատութեանց գործառնութեանց ։ Կ. Պօլսոյ ձայն՝ վերնագրով բաժնի մէջ զետեղումէր քաղուածներ Պօլսոյ լրագրներից բայց դժբաղդաբար այդ ցանկութիւնը ի կատար ածել՝ շատ նգամ չէր յաջողում խմբագրութեան, հարկաւոր ժամանակին և կանոնաւորապէս յըկարողանալով ստանալ Կ. Պօլսոյ թերթերը։

Արարատի հրատարակութեան հանգամանքով այնպիսի դրութիւն ունի, որով կարող էր և շատ հետաքրքրելի դառնալ և շատ անհետաքրքիր բայց ցայսօր հրատարակուել է մինչեւ անտարբերութիւն հասցնող զգուշութեամբ։ Նա չէզոք դիրք է բռնել ամենայն լրագրական խնդիրների վերաբերութեամբ, և յըկամենալով զգուշութեան սահմանից դուրս գալ՝ բովանդակել է գրեթէ ընդ մի տկրօնական, պատմական, բանասիրական և աղգային այնպիսի յօդուածներ՝ որոնք վերին աստիճանի պահպանողական են եղել։

Արարատի հրատարակութեան վերաբերութեամբ խմբագրի անձնաւորութիւնը և նորա կարծիքը նշանակութիւն չունին. ամսագիրը պաշտօնական լինելով և հրատարակութիւն մի ամբողջ միաբանութեան՝ միայն թարգմանի դեր է կատարում։

Արարատի բաժանորդները մեծ մասամբ քահանաներն են, ուստի և խմբագրութիւնը, մանաւանդ վերջին տարին աշխատել է այնպիսի յօդուածներ հրատարակել, որոնք պահանջ լինելին նոցա համար. այս նպատակով՝ սկզբում եկեղեցւոյ ինչ ինչ նշանաւոր տօների բացարութիւնները և նոցա պատմական նշանակութիւնը հրատարակելու ջանքը չէր խնայվում։ Ի վերջոյ նկատելով որ մեր գիւղական քահանաները շատ սակաւ հնարաւորութիւն ունին եւ եղեցական պատմութեան գրքեր կարդալ և ծանօթանալ Հայաստանեայց եկեղեցւոյ անցեալ կեանքի հետ՝ խմբագրութիւնը բարւոք դատեց հրատարակել Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւնը հսնագերձ եկեղեցական ժողովների կանոնաց համառօտութեամբ։ Թէև այդ ըստ երեսութիւն մի նորանշան բան կարող էր երեւել։

Արարատը այսուհետեւ ևս կը շարունակէ իւր ունեցած ուղղութիւնը. և ընթերցողներին ուղղած իւր առաջին խօսքը կը լինի

շնորհաւորութիւն նոր տարւոյ և Ծննդեան ու Աստուածայայտնութեան Տեամբ մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մեր ընթերցողներին շնորհաւորելով նոր տարին և Յիսուսի Քրիստոսի Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը, աղօթումենք որ Ամենաբարին Աստուած բարութեամբ լցնէ բոլոր աշխարհը. շատ աչքերից տրտմութեան արտասուքը սրբելուց յետոյ՝ իւր ամենակարող աջոկը դէպ ի խաղաղ նաւահանգիստ ուղղէ մեր աղքային գործոց վարչական նաւակը տալով աղքիս բանիբուն, երկիւղած և արդարամիտ ղեկավար—որ լինելու է ամենայն Հայոց Հայրապետը:

Բաւական չէր որ ահա երկու տարի է Ամենայն Հայոց Հայրապետի Աթոռը թափուր է և սեւասքօղեալ, նոյն լինակին ենթարկուեց և նորա փոխանորդի — Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքի Աթոռը: Մանկացեալն Յիսուսին մեր հաճոյական նուէրը լինի բոլորանուէր աղօթքը, որ նա երկու աթոռներին ևս արժանաւոր գահակալներ շնորհէ ի պայծառութիւն Աղքի և եկեղեցւոյ:

